Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 951 - Ա որոշման

«ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին պատկանող ուսումնական մասնաշենքում օգտագործելու նպատակով աթոռների ձեռք բերում, որի արդյունքում կստեղծվեն նպաստավոր պայմաններ մասնաշենքում իրականացվող դասընթացների համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (Շվեյցարիա, Բայնվիլ ամ Ձեե, Ֆելդշտրասսե 9) |
| 4. | Ծրագրի կատարողը | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս՝ սոցիալական բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 3 705 200 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հիմնադրամի շահառուներ, սոցիալապես անապահով ընտանիքների անդամներ, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներ, հաշմանդամ երեխաներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2021 թվականի նոյեմբերի 20-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 14-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին պատկանող ուսումնական մասնաշենքում օգտագործելու նպատակով աթոռների ձեռք բերման արժեքը կազմում է 3 705 200 դրամ, իրականացվելու է՝ 20.11.2021 թ-ից մինչև 01.12.2021 թ.: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների | Աթոռների ձեռք բերում՝ 3 705 200 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի: |

| | | |
|---|---|---|
| | համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ կառավարության 2003 թ-ի հունվարի 16-ի թիվ 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

10.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ